ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

28.08.2025թ.

ՈՐՈՇՈՒՄ 674-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԹԻՎ 1, ԹԻՎ 2, ԹԻՎ 3, ԹԻՎ 4, ԹԻՎ 5 ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԵՎ ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԸ ՍՊԱՍԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՅԱՑԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԱՄՓՈՓԵԼՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 44-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշումը,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս քաղաքի թիվ 1, թիվ 2, թիվ 3, թիվ 4, թիվ 5 ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիներն ընդհանուր ավտոմոբիլային տրանսպորտով սպասարկելու իրավունքը ժամանակավոր հատկացնելու նպատակով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու նպատակով 2025 թվականի օգոստոսի 27-ին կայացած մրցույթի արդյունքների ամփոփման նիստի՝ 27.08.2025թ. թիվ 2 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության մրցույթներում հաղթող ճանաչել.
   1) Թիվ 1 և թիվ 3 (ավտոբուսային) երթուղիների համար՝ Ա/Ձ Վարդգես Պետրոսյանին,
   2) Թիվ 2 և թիվ 4 (միկրոավտոբուսային/ավտոբուսային) երթուղիների համար՝ «Լաստ» ՍՊԸ-ին,
   3) Թիվ 5 (միկրոավտոբուսային/ավտոբուսային) երթուղու համար՝ «ՇԱՀ-ՆԱՆ» ՍՊԸ-ին:
3. Մրցույթում հաղթած կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերի հետ կնքել թիվ 1, թիվ 2, թիվ 3, թիվ 4, թիվ 5 երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնելու պայմանագրեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2025թ. օգոստոսի 28
ք. Գորիս

Հավելված
Գորիս համայնքի ղեկավարի
2025 թվականի օգոստոսի 28-ի թիվ 674-Ա որոշման

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Գորիս համայնքի վարչական սահմաններում /ներհամայնքային/ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու նպատակով կայացած մրցույթի արդյունքները ամփոփելու մասին

27.08. 2025թ. *ք.Գորիս*

2025 թվականի օգոստոսի 27-ին ժամը 10:00-ին՝ կայացավ Գորիս համայնքի վարչական սահմաններում /ներհամայնքային/ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության մրցութային հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի

Նախագահ՝ Կարեն Ջավահիրյանը,

Անդամներ Մարիաննա Աբգարյան
Նոննա Տատինցյան
Վահե Պողոսյան

Հանձնաժողովի յոթը անդամից նիստին ներկա էին չորսը՝ նիստն իրավազոր է:
Հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի կազմից նիստը արձանագրելու համար նշանակեց քարտուղար՝ Մ.Աբգարյանին:

Նիստին մասնակցում են

Ա/Ձ Վարդգես Պետրոսյանը
«Լաստ» ՍՊԸ-ն տնօրեն Ս. Արզումանյանը
«ՇԱՀ-ՆԱՆ» ՍՊԸ-ն տնօրեն Ա. Սահակյանը

Օրակարգում՝

Գորիս համայնքի վարչական սահմաններում /ներհամայնքային/ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության ժամանակավոր մրցութի արդյունքների ամփոփումը:

Արձանագրվեց՝

Արդյունքները ներկայացրեց հանձնաժողովի նախագահ Կարեն Ջավահիրյանը.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի վարչական սահմաններում /ներհամայնքային/ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության ժամանակավոր մրցութի՝

Թիվ 1 (ավտոբուսային) և թիվ 3 (ավտոբուսային) երթուղիների համար մրցույթին մասնակցելու հայտ էր ներկայացել Ա/Ձ Վարդգես Պետրոսյանը:

Թիվ 2 (ավտոբուսային/միկրոավտոբուսայնի) և թիվ 4 (ավտոբուսային/միկրոավտոբուսայնի) երթուղիների համար մրցույթին մասնակցելու հայտ էր ներկայացել «Լաստ» ՍՊԸ-ն:

Թիվ 5 (ավտոբուսային/միկրոավտոբուսայնի) երթուղու համար մրցույթին մասնակցելու հայտ էր ներկայացրել «ՇԱՀ-ՆԱՆ» ՍՊԸ-ն:

Թիվ 1 (ավտոբուսային) երթուղին ժամանակավոր սպասարկելու համար դիմած Ա/Ձ «Վարդգես Պետրոսյան»-ին գնահատման ժամանակ ընդհանուր հավաքել է 62 միավոր:

Թիվ 2 (ավտոբուսային/միկրոավտոբուսային) երթուղին ժամանակավոր սպասարկելու համար դիմած «Լաստ» ՍՊԸ-ն գնահատման ժամանակ ընդհանուր հավաքել է 83 միավոր:

Թիվ 3 (ավտոբուսային) երթուղին ժամանակավոր սպասարկելու համար դիմած Ա/Ձ Վարդգես Պետրոսյանն գնահատման ժամանակ ընդհանուր հավաքել է 62 միավոր:

Թիվ 4 ավտոբուսային/միկրոավտոբուսային երթուղին ժամանակավոր սպասարկելու համար դիմած «Լաստ» ՍՊԸ-ն գնահատման ժամանակ ընդհանուր հավաքել է 83 միավոր:

Թիվ 5 ավտոբուսային/միկրոավտոբուսային երթուղին ժամանակավոր սպասարկելու համար դիմած «ՇԱՀ-ՆԱՆ» ՍՊԸ-ն գնահատման ժամանակ ընդհանուր հավաքել է 64 միավոր:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի՝ «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 և 2007 թվականի հունիսի 21-ի N 816-Ն որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1994-Ն որոշումը և 2025 թվականին օգոստոսի 27-ի կայացած մրցույթի ամփոփված արդյունքները, հանձնաժողովը

Որոշեց՝

1. Թիվ 1 և թիվ 3 (ավտոբուսային) երթուղիների մրցույթում հաղթող ճանաչել Ա/Ձ Վարդգես Պետրոսյանին և առաջարկել համայնքի ղեկավարին կնքել երթուղու ժամանակավոր սպասարկման պայմանագիր՝ **երկու հազար քսանհինգ թվականի սեպտեմբերի մեկից մինչև երկու հազար քսանյոթ թվականի դեկտեմբերի երեսունմեկը ներառյալ**՝ համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որորշմամբ սահմանված առավելագույն ժամկետի:

   Թիվ 1 (ավտոբուսային) երթուղու համար հաստատել 100 /մեկ հարյուր/ դրամ ուղևորափոխադրավարձ:

   Թիվ 3 (ավտոբուսային) երթուղու համար հաստատել 150 /մեկ հարյուր հիսուն/ դրամ ուղևորափոխադրավարձ:
2. Թիվ 2 և թիվ 4 (միկրոավտոբուսային/ավտոբուսային) երթուղու հաղթող ճանաչել «Լաստ» ՍՊԸ-ին և առաջարկել համայնքի ղեկավարին կնքել երթուղու ժամանակավոր սպասարկման պայմանագիր՝ **երկու հազար քսանհինգ թվականի սեպտեմբերի մեկից մինչև երկու հազար քսանյոթ թվականի դեկտեմբերի երեսունմեկը ներառյալ**՝ համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որորշմամբ սահմանված առավելագույն ժամկետի:

Թիվ 2 (միկրոավտոբուսային/ավտոբուսային) երթուղու համար հաստատել 100 /մեկ հարյուր/ դրամ ուղևորափոխադրավարձ:

Թիվ 4 (միկրոավտոբուսային/ավտոբուսային) երթուղու համար հաստատել 150 /մեկ հարյուր հիսուն/ դրամ ուղևորափոխադրավարձ:

3. Թիվ 5 (միկրոավտոբուսային/ավտոբուսային) երթուղու հաղթող ճանաչել «ՇԱՀ-ՆԱՆ» ՍՊԸ-ին և առաջարկել համայնքի ղեկավարին կնքել երթուղու ժամանակավոր սպասարկման պայմանագիր՝ **երկու հազար քսանհինգ թվականի սեպտեմբերի մեկից մինչև երկու հազար քսանյոթ թվականի դեկտեմբերի երեսունմեկը ներառյալ՝** համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշմամբ սահմանված առավելագույն ժամկետի:

Թիվ 5 (ավտոբուսային) երթուղիների համար հաստատել 300 /երեք հարյուր/ դրամ ուղևորափոխադրավարձ:

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել սույն արձանագրությունը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Գորիս համայնքի վարչական սահմաններում /ներհամայնքային/ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու նպատակով կայացած մրցույթի արդյունքները ամփոփելու մասին

27.08. 2025թ. *ք.Գորիս*

2025 թվականի օգոստոս 27-ին ժամը 10:00-ին՝ կայացավ Գորիս համայնքի վարչական սահմաններում /ներհամայնքային/ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության մրցութային հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի

Նախագահ՝ Կարեն Ջավահիրյանը,

Անդամներ Մարիաննա Աբգարյան

Նոննա Տատինցյան

Վահե Պողոսյան

Հանձնաժողովի յոթը անդամից նիստին ներկա էին չորսը՝ նիստն իրավազոր է:
Հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի կազմից նիստը արձանագրելու համար նշանակեց քարտուղար՝ Մ.Աբգարյանին:

Նիստին մասնակցում են

Ա/Ձ Վարդգես Պետրոսյանը

«Լաստ» ՍՊԸ-ն տնօրեն Ս. Արզումանյանը

«ՇԱՀ-ՆԱՆ» ՍՊԸ-ն տնօրեն Ա. Սահակյանը

Օրակարգում՝

Գորիս համայնքի վարչական սահմաններում /ներհամայնքային/ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության ժամանակավոր մրցութի արդյունքների ամփոփումը:

Արձանագրվեց՝

Արդյունքները ներկայացրեց հանձնաժողովի նախագահ Կարեն Ջավահիրյանը.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի վարչական սահմաններում /ներհամայնքային/ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության ժամանակավոր մրցութի՝

Թիվ 1 (ավտոբուսային) և թիվ 3 (ավտոբուսային) երթուղիների համար մրցույթին մասնակցելու հայտ էր ներկայացել Ա/Ձ Վարդգես Պետրոսյանը:

Թիվ 2 (ավտոբուսային/միկրոավտոբուսայնի) և թիվ 4 (ավտոբուսային/միկրոավտոբուսայնի) երթուղիների համար մրցույթին մասնակցելու հայտ էր ներկայացել «Լաստ» ՍՊԸ-ն:

Թիվ 5 (ավտոբուսային/միկրոավտոբուսայնի) երթուղու համար մրցույթին մասնակցելու հայտ էր ներկայացրել «ՇԱՀ-ՆԱՆ» ՍՊԸ-ն:

Թիվ 1 (ավտոբուսային) երթուղին ժամանակավոր սպասարկելու համար դիմած Ա/Ձ «Վարդգես Պետրոսյան»-ին գնահատման ժամանակ ընդհանուր հավաքել է 62 միավոր:

Թիվ 2 (ավտոբուսային/միկրոավտոբուսային) երթուղին ժամանակավոր սպասարկելու համար դիմած «Լաստ» ՍՊԸ-ն գնահատման ժամանակ ընդհանուր հավաքել է 83 միավոր:

Թիվ 3 (ավտոբուսային) երթուղին ժամանակավոր սպասարկելու համար դիմած Ա/Ձ Վարդգես Պետրոսյանն գնահատման ժամանակ ընդհանուր հավաքել է 62 միավոր:

Թիվ 4 ավտոբուսային/միկրոավտոբուսային երթուղին ժամանակավոր սպասարկելու համար դիմած «Լաստ» ՍՊԸ-ն գնահատման ժամանակ ընդհանուր հավաքել է 83 միավոր:

Թիվ 5 ավտոբուսային/միկրոավտոբուսային երթուղին ժամանակավոր սպասարկելու համար դիմած «ՇԱՀ-ՆԱՆ» ՍՊԸ-ն գնահատման ժամանակ ընդհանուր հավաքել է 64 միավոր:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի՝ «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 և 2007 թվականի հունիսի 21-ի N 816-Ն որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1994-Ն որոշումը և 2025 թվականին օգոստոսի 27-ի կայացած մրցույթի ամփոփված արդյունքները, հանձնաժողովը

Որոշեց՝

Թիվ 1 և թիվ 3 (ավտոբուսային) երթուղիների մրցույթում հաղթող ճանաչել Ա/Ձ Վարդգես Պետրոսյանին և առաջարկել համայնքի ղեկավարին կնքել երթուղու ժամանակավոր սպասարկման պայմանագիր՝ **երկու հազար քսանհինգ թվականի սեպտեմբերի մեկից մինչև երկու հազար քսանյոթ թվականի դեկտեմբերի երեսունմեկը ներառյալ՝** համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշմամբ սահմանված առավելագույն ժամկետի:

Թիվ 1 (ավտոբուսային) երթուղու համար հաստատել 100 /մեկ հարյուր/ դրամ ուղևորափոխադրավարձ:

Թիվ 3 (ավտոբուսային) երթուղու համար հաստատել 150 /մեկ հարյուր հիսուն/ դրամ ուղևորափոխադրավարձ:

Թիվ 2 և թիվ 4 (միկրոավտոբուսային/ավտոբուսային) երթուղու հաղթող ճանաչել «Լաստ» ՍՊԸ-ին և առաջարկել համայնքի ղեկավարին կնքել երթուղու ժամանակավոր սպասարկման պայմանագիր՝ **երկու հազար քսանհինգ թվականի սեպտեմբերի մեկից մինչև երկու հազար քսանյոթ թվականի դեկտեմբերի երեսունմեկը ներառյալ՝** համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշմամբ սահմանված առավելագույն ժամկետի:

Թիվ 2 (միկրոավտոբուսային/ավտոբուսային) երթուղու համար հաստատել 100 /մեկ հարյուր/ դրամ ուղևորափոխադրավարձ:

Թիվ 4 (միկրոավտոբուսային/ավտոբուսային) երթուղու համար հաստատել 150 /մեկ հարյուր հիսուն/ դրամ ուղևորափոխադրավարձ:

Թիվ 5 (միկրոավտոբուսային/ավտոբուսային) երթուղու հաղթող ճանաչել «ՇԱՀ-ՆԱՆ» ՍՊԸ-ին և առաջարկել համայնքի ղեկավարին կնքել երթուղու ժամանակավոր

սպասարկման պայմանագիր՝ **երկու հազար քսանհինգ թվականի սեպտեմբերի մեկից մինչև երկու հազար քսանյոթ թվականի դեկտեմբերի երեսունմեկը ներառյալ՝** համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշմամբ սահմանված առավելագույն ժամկետի:

Թիվ 5 (ավտոբուսային) երթուղիների համար հաստատել 300 /երեք հարյուր/ դրամ ուղևորափոխադրավարձ:

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել սույն արձանագրությունը:

Հանձնաժողովի նախագահ _____ Կարեն Ջավահիրյան

Քարտուղար _____ Մարիաննա Աբգարյան

Հանձնաժողովի անդամներ _____ Նոննա Տատինցյան

_____ Վահե Պողոսյան